Կհանդիպեն հունիսին

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի առաջին հանդիպումը Հայաստանի նոր նախագահ Սերժ Սարգսյանի հետ կկայանա հունիսին: Այդ մասին երեկ Ինդոնեզիայի ԱԳ նախարարի հետ հանդիպումից հետո կազմակերպված մամլո ասուլիսում հայտարարել է Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը: Նա նշել է, որ Ստրասբուրգում իր հայ գործընկեր Էդվարդ Նալբանդյանի հետ հանդիպումն առաջինն էր եւ կրում էր ճանաչողական բնույթ: «Համաձայնություն է կայացվել նախագահների մակարդակով հանդիպում անցկացնելու վերաբերյալ: Հավանաբար, այդ հանդիպումը տեղի կունենա հունիսին: Ադրբեջանական կողմի համար շատ կարեւոր է հանդիպել Հայաստանի նոր իշխանությունների հետ: Մենք պետք է պարզենք՝ պատրա՞ստ են նրանք խաղաղ բանակցություններին, թե՞ ոչ»: Նշենք, որ հունիսի 6-8-ը Սանկտ-Պետերբուրգում կանցկացվեն Միջազգային էներգետիկ 12-րդ համաժողովը եւ ԱՊՀ ոչ պաշտոնական գագաթնաժողովը: Ակնկալվում է, որ Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների առաջին հանդիպումը տեղի կունենա այդ միջոցառման շրջանակներում: